



Երեքշաբթի, 4 Հոկտեմբեր, 2011  
 Պէյրոս

Ազնուափայլ Տիկին Հրանուշ Յակոբեան  
 Սփիւռքի Նախարար  
 Երեւան, Հայաստանի Հանրապետութիւն

Ազնուափայլ Տիկին Յակոբեան,


Ուրախութեան եւ պարծանքի առիթ մըն էր ձեր անձնապէս ներկայութիւնը Լիբանան եւ մասնակցութիւնը մեր կազմակերպած Հայաստան-Սփիւռք գիտաժողովին Սեպտ. 7 – Սեպտ. 9, 2011-ին Սփիւռքի Նախարարութեան, Հայկազեան Համլսարանի եւ Երեւանի Պետական Համալսարանի բարի համագործակցութեամբ:

Որքան շնորհակալ ենք նաեւ Սփիւռքի Նախարարութեան մեծ ջանքերով կազմակերպած եւ կատարելագործած սփիւռքի ներկայացուցիչներու համաժողովին մեր Հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 20 ամեակին առիթով:

Հայաստան-Սփիւռք գործակցութեամբ է որ պիտի զարգանայ հայ ժողովուրդը որպէս մէկ հզօր մարմին ու ինքնութիւն:

Ուրախ ենք յայտնելու նաեւ թէ մեր համագործակցութիւնը Երեւանի Պետական Համալսարանին հետ հետզհետէ կ'ամրապնդուի եւ կը յուսանք Հայկազեան-ԵՊՀ մեր երկրորդ գիտաժողովը կազմակերպել 2012 տարուան կէսերուն:

Յաջողութեան լաւագոյն մաղթանքներ:

  
 Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեան  
 Նախագահ Հայկազեան Համալսարանի

